

համաձայն և ուղիղ ու սուր պատմական ըմբռնողութեամբ նկարագրուած։ Միայն մի ջերմ՝ ցանկութիւն կարևոր ենք համարում՝ աւելացնել մեր կողմից, թող Կ. Վ. իւր ազատ միջոցը գործադրէ այս գրքի շանտենակութեան վրայ, որին մեզ հետ, յոյս ունինք, շատերն են սպասում։

ԵՐՈՒԱՆԻ ՎԱՐԴԱՊԵՏ.

Երիտասարդ Թիւրքիա. գրեց Ս. Սապան-Գիւլեան Պարիզ 1908 թ. զինն է 50 սանսիմ. Հրատարակութիւն Հնչակեան կուսակցութեան № 16:

Հեղինակի այս գրքոյն ուշադրութեան արժանի է յատկապէս ներկայ պայմաններում. յուլիսի 11-ի բարեփոխութեամբ երիտասարդ թուրքերի կուսակցութիւնը առաջնակարգ գործոն հանդիսացաւ Օսմանեան պատմութեան մէջ, թուրքիայի բաղդը, նորա յաջողութիւնն ու ներքին խաղաղութիւնը կապուած է մասամբ և այս կուսակցութեան բաղդի հետ։ Այսօր նրանք են ղեկավարող ուժերը և երևի նրանք կլինեն նաև նոր պետութեան և սահմանադրական օրէնստուութեան հոգին ու տէրը։ Մահօթանալ այս շարժման ծագման և զարգացման պատմութեան հետ ինքնըստինքեան շահեկան է, բայց ծանօթանալ նրա ձգտումներին, առաջնորդող գաղափարներին և հայեացքներին մեզ համար կենսաթրթիւ մի խնդիր է յատկապէս, թէ այդ կուսակցութիւնը ինչպէս է նայում ազգայնական խնդիրների վերայ։

Հեղինակը մեզ պատմական համառօտ ծանօթութիւններ տալուց և Միդհատեան սահմանադրութեան ֆիասկօն նկարագրելուց յետոյ, քննութեան է ենթարկում երիտասարդ թուրքերի սխալներն ու պակասութիւնները։ Երիտասարդ թուրքերը ոգևորուած Օսմանեան պետութեան գաղափարով, անուշադիր են թողնում ազգայնական խնդիրները, Իսկ պետութիւնը, ընդհանուր բարեկարգութեան խնդիրը հանդէս է բերել այն ժամանակ, երբ այս կամ այն ազգի համար ինքնավարութեան հարց է ծագել։ Հայ, արաբ, մակեդո-

նական ազգերը չի կարելի միացնել օսմանեան կամ թուրք տարրի հետ։ Սոքա ունին իրենց անցեալը, քաղաքակրթութիւնը, լեզուն, որ ոչնչացնել կարելի չէ։ Նոյն իսկ միջազգային բնաւորութիւն է ստացել եւրոպական պետութիւնների ձեռքով նրանց ինքնավարութեան հարցերը։ Արեւելեան խնդիրը լուծուել կարող է, երբ այս վերջին հանգամանքները ի նկատի առնուին։ Ընդհանուր բարեփոխութիւն ամբողջ պետութեան մէջ և ազգային ինքնավարութիւն այլասեռ, ոչ թուրք փարբերի համար, ահա արեւելեան հարցի լուծման ուղիղ ճանապարհը ըստ հեղինակի։

Միանգամայն համաձայն ենք հեղինակի այս վերջին մտքերի հետ։ Գրքոյկը հրատարակուած է յուլիսի 11-ի յեղափոխութիւնից առաջ, հեղինակն ամենեւին չի նախատեսում երիտասարդ թուրքերի կատարելիք գործը։ Նոյն իսկ արհամարհանքով է խօսում նրանց զօրութեան և գործնական հետեւանքների մասին։ Բայց այս կէտը չի նսեմացնում հեղինակի գլխաւոր մտքերը, որ ի նկատի պիտի ունենան երիտասարդ թուրքերը, եթէ Օսմանեան պետութեան մէջ խաղաղութիւն և այլասեռ տարրերի համերաշխութիւն հաստատուել են կամենում։

Գ.

Փսութեան օճախը կամ Օրմանեանի պատրիարքութիւնը. գրեց Ա. Գրիգորեան, Պոսթոն, 1908.

Ոչին Ա. Գրիգորեան՝ նախ Ամերիկայում հրատարակուող «Ազգ» լրագրի մէջ և ապա առանձին գրքով 11 գլխի մէջ հոլովել է փողոցային անպատկառութեամբ հայոց լեզուի բոլոր հայհոյական բառերն ու ոճերը Ս. Օրմանեանցի դէմ, նորան վարկաբեկ անելու և կաթուղիկոսութեան համար նորա անձնաւորութիւնը վնասակար ցոյց տալու նպատակով։ «Զանգակը» № 36, որի թշնամական յարաբերութիւնը դէպի նախկին պատրիարքը յայտնի է ամենքին, ահա ինչպէս է բնորոշում այդ գիրքը իւր աշխատակից Ն. Ա. ձեռքով. «Նրա (Օրմանեանի) ա-